ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ANQA-2025/120

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 մարտի 2025 թ. N 120

«ԱՐՄԱՎԻՐԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը՝ **«Արմավիրի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ**
Գործունեության հասցեն՝ **ՀՀ, Արմավիրի մարզ, Արմավիր համայնք, ք. Արմավիր, Երևանյան 36, Շահումյան 46, Աբովյան 170**
Նախորդ հավատարմագրման մասին
որոշումը և ժամկետը՝ **չի ունեցել**

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով (այսուհետ՝ Հավատարմագրման կարգ), «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 2025 թվականի մարտի 20-ին Հավատարմագրման Հանձնաժողովի նիստում քննարկեց «Արմավիրի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ ԱՏՊՔ, քոլեջ) ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

Հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում՝ 05 փետրվարի 2024 թ.
վերանայված ինքնավերլուծության ներկայացում՝ 02 հուլիսի 2024 թ.
փորձագիտական այցի իրականացում՝ 01-03-ը հոկտեմբերի 2024 թ.
փորձագիտական զեկույցի ներկայացում՝ 26 դեկտեմբերի 2024 թ.
թերությունների վերացման նախնական
ծրագրի ներկայացում՝ 31 հունվարի 2025 թ.

ԱՏՊՔ ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի կողմից.

- **Արմենուհի Սարգսյան**- Շիրակի պետական համալսարանի դասախոս, փորձագիտական խմբի ղեկավար:
- **Կարինե Մնացականյան** - Երևանի հենակետային բժշկական քոլեջի դասախոս, փորձագիտական խմբի անդամ:
- **Աիդա Դաբաղյան**- Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոնի որակի պատասխանատու, կաղրային հարցերով տնօրենի օգնական, փորձագիտական խմբի անդամ:
- **Ինևա Մելքոնյան**- Հայ-Ռուսական համալսարանի ուսանողուհի, ուսանող-փորձագետ:

Փորձաքննությունն իրականացվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով: Գնահատման արդյունքներն են.

Չափանիշ	Եզրակացություն
1. Առաքելություն և նպատակներ	Բավարարում է
2. Կառավարում ու վարչարարություն	Չի բավարարում
3. Մասնագիտության կրթական ծրագրեր	Բավարարում է
4. Ուսանողներ	Բավարարում է
5. Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	Բավարարում է
6. Հետազոտություն և զարգացում	Չի բավարարում
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	Չի բավարարում
8. Հասարակական պատասխանատվություն	Բավարարում է
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	Չի բավարարում
10. Որակի ներքին ապահովման համակարգ	Չի բավարարում

Հանձնաժողովը, ուսումնասիրելով ԱՏՊՔ-ի կողմից ներկայացված ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը, զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ քոլեջի դիտարկումները, փորձագիտական զեկույցը, զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների նախնական ծրագիրը, լսելով քոլեջի փորձագիտական գնահատման վերաբերյալ Հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված երկու անդամների եզրակացությունները, որոնք ձևավորվել են փորձագիտական խմբի անդամների և ուսումնական հաստատության ներկայացուցիչների հետ հանդիպումների արդյունքում, ինչպես նաև Հանձնաժողովի անդամների դիտարկումներն ու առաջարկությունները, ամրագրեց հետևյալը.

1. **ԱՏՊՔ-ում առկա են հրատապ բարելավման կարիք ունեցող ուղղություններ, որ կապահովեն որակավորումների արժանահավատ շնորհման կայուն համակարգ:**

Քոլեջն անհրաժեշտություն ունի բարելավելու կրթական ծրագրերի վերանայման քաղաքականությունն ու գործընթացները՝ ապահովելով դրանց ժամանակին և պարբերական թարմացումը: Այժմ գործող բոլոր ծրագրերը կարիք ունեն կրթական արդյունավետության համապարփակ աուդիտի՝ պարզելու առկա թերությունները և կատարելու անհրաժեշտ ճշգրտումներ: Այս բարելավումները սերտորեն կապված են

նաև դասախոսական կազմի հետ: Անհրաժեշտ է հրատապ ներդնել դասախոսական կազմի պարբերական վերապատրաստման քաղաքականություն՝ ուղղված շարունակական մասնագիտական և մանկավարժական զարգացմանը բոլոր մասնագիտությունների գծով: Սա թույլ կտա ապահովել ժամանակակից, պահանջարկին համապատասխան ուսուցման գործընթաց:

Նյութատեխնիկական բազան միայն որոշ դեպքերում է բավարարում նվազագույն պահանջները: Ուստի, կարիք կա հրատապ արդիականացնել նյութատեխնիկական միջոցները՝ հատկապես ուսուցման այն ձևաչափերին համապատասխան, որոնք պահանջում են ինտերակտիվություն և ուսանողակենտրոն մոտեցում: Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է մշակել թվային ու առցանց ռեսուրսների արդյունավետ օգտագործման մշակույթ, որը կնպաստի ուսուցման գործընթացի արդիականացմանն ու ուսանողների ներգրավվածության բարձրացմանը: Խիստ կարևոր է ընդգծել, որ նշված բարելավումները չպետք է պայմանավորված լինեն միայն նոր շենքի շահագործմամբ: Դրանք պետք է իրականացվեն արդեն գոյություն ունեցող պայմաններում՝ առավել արդյունավետ օգտագործելով առկա ռեսուրսները: Այս առումով կարևոր կլինեն նաև գործատուների աջակցությամբ իրականացվող բարեկարգումները, որոնք կարող են նպաստել ներկայիս տարածքների ավելի արդյունավետ օգտագործմանը: Հաշվի առնելով, որ նոր շինարարական գործընթացները կարող են ձգձգվել, հատկապես կարևոր է անհապաղ քայլեր ձեռնարկել՝ բարելավումներն ապահովելու արդեն գործող միջավայրում:

2. **Ռազմավարական կառավարումն ու որակի ապահովման համակարգը, հաշվի առնելով քոլեջների միավորման փաստը, պետք է ձևափոխվել՝ ներառելով նոր, միասնական և բազմագործառույթային կառույցի կառավարման համար անհրաժեշտ արդյունավետ գործիքներ:**

Քոլեջների միավորման արդյունքում կառավարման և որակի ապահովման համակարգերում առաջացել են արդյունավետության խնդիրներ, որոնք կապված են միասնական ռազմավարական մոտեցումների ապահովման հետ: Այս խնդիրները պահանջում են հրատապ լուծումներ, որոնց ուղղությամբ պետք է նախապես քայլեր իրականացված լինեին միավորման գործընթացից առաջ:

Ներկայումս անհրաժեշտ է էականորեն ուժեղացնել որոշումների կայացման գործընթացում տվյալների և վերլուծությունների կիրառումը՝ ստեղծելով տվյալահենք կառավարման մշակույթ: Սա կնպաստի հիմնավորված, կանխատեսելի և արդյունքի վրա հիմնված որոշումների կայացմանը: Բացի այդ, վարչական կառուցվածքում նպատակահարմար է վերացնել կրկնվող պաշտոնները, հստակեցնել պատասխանատվության բաշխումը և ապահովել գործառույթների արդյունավետ համակցում: Կարևոր է նաև ներդնել կարճաժամկետ և երկարաժամկետ պլանավորման փոխկապակցված և շարունակական մեխանիզմներ, որոնք կապահովեն ռազմավարական խնդիրների և իրական գործողությունների միջև կապը, ինչպես նաև կառավարումը՝ հիմնված գնահատման հստակ և չափելի ցուցանիշների վրա: Քոլեջի կազմակերպական կառուցվածքում անհրաժեշտ է խթանել միջմասնագիտական հորիզոնական կապերի զարգացումը՝ ապահովելով ստորաբաժանումների միջև համագործակցության բարձր մակարդակ և միասնականություն:

Այս ամենի արդյունքում, քանի որ քոլեջը ներկայումս գործում է մասնատված և ինքնուրույն հատվածների տրամաբանությամբ, առաջնահերթ է կարճաժամկետ հեռանկարում ձևավորել ամբողջությամբ ինտեգրված կառավարման համակարգ: Միավորված և ներդաշնակ կառավարման մոդելը հնարավորություն կտա հաստատությանն ունենալ ռազմավարական զարգացման հստակ ուղղորդում և առավել արդյունավետ կերպով օգտագործել իր ռեսուրսները:

3. ***Քոլեջի միջազգայնացման և հետազոտական/ստեղծագործական գործունեությունը չի ստանում ինստիտուցիոնալ աջակցություն հաստատության երկարաժամկետ համաչափ զարգացման համար***

Քոլեջը կարևորում է արտաքին կապերը և գործատուների հետ համագործակցությունը, սակայն այդ համագործակցությունը ներկայումս հիմնականում սահմանափակվում է ուսանողական պրակտիկաների կազմակերպմամբ: Անհրաժեշտ է հստակ ձևակերպել գործատուների մոտ

իրականացվող պրակտիկաներից ակնկալվող արդյունքները՝ ապահովելով դրանց արդյունավետությունը: Արտաքին կապերի ոլորտում քոլեջը պետք է անցում կատարի առկա համագործակցությունների պահպանումից դեպի դրանց ընդլայնում և խորացում: Սա պահանջում է նոր, առավել նախաձեռնողական մոտեցում՝ ուղղված ոչ միայն գործատուների, այլև միջազգային գործընկերների ներգրավմանը:

Միջազգայնացման ոլորտում նպատակահարմար է մշակել հստակ ռազմավարություն և գործողությունների պլան, որոնք ներառեն նպատակային ծրագրեր, միջազգային համագործակցությունների հաստատման մեխանիզմներ և միջազգային փորձի ուսումնասիրության ուղիներ: Միևնույն ժամանակ, հետազոտական և ստեղծագործական գործունեության զարգացման համար նհրաժեշտ է սահմանել հստակ նպատակներ և առաջնահերթ ուղղություններ՝ խրախուսելով ինչպես դասախոսական կազմի, այնպես էլ ուսանողների ներգրավվածությունը: Դասախոսների հետազոտական ներգրավվածությունը կարելի է ամրապնդել տեղական և միջազգային փորձի ուսումնասիրության միջոցով՝ այդ գիտելիքը վերածելով նոր հմտությունների փոխանցման գործընթացի:

Ուսանողների հետազոտական կարողությունների ձևավորման համար կարևոր է դուրս գալ զուտ ռեֆերատային աշխատանքների շրջանակից՝ խթանելով վերլուծական և հետազոտական տարրերի ընդգրկումը կուրսային և դիպլոմային աշխատանքներում: Սա կծառայի որպես հիմնական մեխանիզմ ուսանողների մասնագիտական հմտությունների խորացման և դրանք միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու համար:

Ներկայումս ձևավորվում է նոր բազմապրոֆիլ կառույց՝ նոր ռազմավարությամբ: Այս փոփոխություններին համահունչ անհրաժեշտ է ի սկզբանե ապահովել միասնական զարգացման հստակ ռազմավարություն՝ ներառելով միջազգայնացման և հետազոտական կարողությունների զարգացման նպատակներ:

Կարևոր է ընդգծել, որ արդյունավետ կլիներ այս ուղղությունները նախատեսել միավորումից առաջ և ներառել միավորման ճանապարհային քարտեզում: Քոլեջին անհրաժեշտ է տրամադրել բավարար ժամանակ՝ անհրաժեշտ հիմքերի ձևավորման համար, որպեսզի պետական ֆինանսական ներդրումներն ունենան իրական, երկարաժամկետ արդյունքներ և ազդեցություն:

Ելնելով վերը նշվածից, Հավատարմագրման Հանձնաժողովը բաց քվեարկության արդյունքում

ՈՐՈՇԵՑ

1. **«Արմավիրի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի ինստիտուցիոնալ հավատարմագրումը մերժել:**
2. Քոլեջը փորձագիտական զեկույցում նշված թերությունները վերացնելուց և խորհրդատվություններն իրականացնելուց հետո, սահմանված կարգի համաձայն, 2 տարի հետո կարող է կրկին դիմել ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար:

Հավատարմագրման Հանձնաժողովի նախագահ **Վ. Գաբրիելյան**

2025 թ., մարտի 20

ք. Երևան